

ՄԱՏԵՎԱԳՐԱԿԱՆ

(ԽԵՒ) ՅՈՎՀԱՆՆԵԼՈ ԹԱԿՈՒԹՅՈՒՑԻ

Ա. ՎԻՊԵՐԳՆԵՐ

= 3 =

ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԼԽԱՏՄԱՆ

Ա.

Յորժամ կամէր Հայրըն զըթած զազատութիւն ազգի մարդկան,  
նայ առաքեաց ըզԴաբրիէլ առ Զաքարիա մեծ քահանայն :

Բ.

Յորժամ ածէր խունկ տաճարին պատիւ ի փառս Աստուածութեան,  
յաջմէ տեսաւ ընդ սեղանոյ ըզբոցատիպն աննիւթական :

Գ.

Որ ասէր. Զաքարիա, քեզ աւետիս ծայն խնդութեան,  
յընանի քեզ մեծ զաւակ, քան զմարգարէսն ազնուական :

Դ.

Ապասաւոր անմահ Բանին, աննդ Որդւոյն անհասական,  
որ մարմնանայ ի սուրբ Կոււչէն, ի փրկութիւն ազգի մարդկան :

Ե.

Կինն ամուլ էր ծերացեալ, այնիւ չեղաւ բանին հաւան,  
պապանձեցաւ Զաքարիա, մինչ որ ծնաւ զմաքուր տըղայն :

Զ.

Ապայ Որդի Հօր բընութեան, որ անըսկիզբն եւ անվախճան,  
էառ մարմին ի սուրբ Կոււչէն, ի փրկութիւն ազգի մարդկան :

Է.

Յորժամ ծընաւ զՏէրն եւ զծառայն, երկինք և երկիր շնորհօք լըցան,  
հովիւքն եւ մոզքըն շարժեցան, երկիր պազին սուրբ Ծընընդեան :

Բնագիր Գ = Զեռ. Ա. Յ. Թ. 615,  
թէ. 1592-5, Ժողովածոյ, բոլորգիր, էջ  
317, 35 տուն. — Հմետ. Ե = Զեռ. Ա. Յ.  
Թ. 1193, թէ. 1476, Պանձգիրք, բոլորգիր  
լաւ, էջ 627, 19 տուն. Ա. = Տաղարան.  
տպ. 1513, էջ 125, 27 տուն. Զ = Զօղան-  
եան Արշակ, Անահիտ, 1931, էջ 3, 35  
տուն, վերակազմեալ բնագիր համաձայն  
Ա. և Գ օրինակներու:

Բ. 2. — Յաջմէ, Ե. ընդ աջմէ, ԱԳ.՝  
Քըբոցատիպն աննիւթական, Ե. ի բոցա-  
տիպն անհիւթական, ԱԳ.՝

Գ. 1. — Ասէր, Ե. ասէ, ԱԳ.՝ 2 —  
քան զմարգարէսն — սուրբ և մաքուր, Ե.  
Գ. — Զունի Ե.՝ 1 — անեղ — ա-  
հեղ, Զ.  
Ե. 1. — Ծերացեալ — ծեր հասակ,  
Ե. չեղաւ — չեկաց, Ե.՝ 2 — մինչ որ  
— մինչև, Ե.  
Զ. — Զունի Ե.՝ 1 — անվախճան,  
Զ. անվազ ճան, Գ. անվաղջան, Ա.  
կ. — Զունի Ե.՝ 1 — լըցվան, Ա.  
— 2 — մոզքըն, Զ. մոզն, ԱԳ.՝ եր-  
կիրպազեն, Ա. երկըրպազեն, ԳԶ.՝

Ռ.

Յորժամ մեծցաւ սուրբն Յովանէս, լեբինըն արար իւր բնակարան,  
և ճաշակէր մարախ և մեղք, ըստեւ ուզոյ իւր ծածկարան:

Փ.

Ի մարմնի էր անմարմին, վարք և ճգունը հրեշտակական,  
Քարոզէր մկըրտութիւն, ապաշխարել տայր պատուիրան:

Փ.

Մըկըրտիաց ըգբանն Աստուած, և ի վերուստ լրւաւ նա ձայն,  
Սուրբ Հոգին աղաւնակերպ գայր իշանէր ի Յորդանան:

Փ.Ա.

Վըկայեաց անմահ Բանին, մատամին եցոյց ժողովրդիան,  
Մայ է Քրիստոս գառն Աստուծոյ, բառնայ ըզմեղսըն զամենայն:

Փ.Բ.

Ով հաւատայ և Որդի ասէ, նայ մըտանէ ի դատաստան,  
Որ ուրանայ՝ դատապարտի, ի հուրն անշէջ և անխախնան:

Ի.

Փ.Գ.

ԶՀերովդէս յանդիմանեաց, և զբոլոր ազգն Հրէական,  
Ասաց աւրէնք չէ քեզ առնուլ ըզկին եղբաւր բո, իժ զազան:

Փ.Գ.

Ոխացաւ ընդ Յովաննու, տարաւ ի բանտն ի յարգելան,  
Աւր մի պատիւ տայր իշխանաց, յաւր ծնրնդեան իւր կորրստեան:

Փ.Ե.

Անըզգամ կինըն լըսեց, զդուստրն լինեց զիւաց դարան,  
Զծամն և զվարսերըն յաւրինեց, կամարածեւ զարմանական:

Փ.Զ.

Զաչըն և զուներըն թըխացոյց, զերեսն աւծեց զեղ զիւական,  
Բոլոր ըզանձըն զարդարեց, շինեաց զիւաց նոխ ճնմարան:

Փ.Է.

Ասաց, զընայ և անդ խաղայ, հանց որ ժողովրն հիանան,  
Խնդրէ զզլուխըն զՅովաննու, յորժամ պարգեւք քեզ խոստանան:

Բ. 1. — Երբ մեծացաւ և զարգացաւ,  
զիւրինու . . . Ե. — 2 — և ճաշակէր — կե-  
րակրէր, Ե. բառեւ ուզոյ իւր, Ե. խոսի  
ուզոյ էր, Ա.Գ.

Բ. 1. — . . . ճպնողք, Գ. — 2 — Քա-  
րոզել, Ե.

Ժ. 1. — Լըւաւ նա ձայն, Ե. ազաւ-  
նաձայն, Ա. աղօւզանաձայն, Գ. — 2 —  
գայր իշանէր ի Յորդանան, Ե. տեսաւ որ  
էջ ի [Բ]որդանան, Ա.Գ.

Ժ. 1. — Զունի Ե.

Ժ. 1. — Զունի Ե. — 2 — անվախճան,  
Զ. անվաղճան, Գ. անվաղջան, Ա.

Ժ. 1. — . . . բոլոր ըզգաստը Հրեա-

կան, Ե. Հրէաստան, Ա.Գ. — 2 — . . . ըզ-  
կին եղբաւը քո իժ զազան (= Ե. թ. 2).  
զեզբօրըդ կինն իժ ու զազան, Ա.Գ.

Ժ. 1. — Յովաննէս, Ա. ի յարգե-  
լան, Ե. արգելական, Ա.Գ. — 2 — . . .

յաւր ծնրնդեան իւր կորրստեան (= Ե. թ.  
2). իւր ծնրնդեան որ կորրստեան, Ա.Գ.

Ժ. 1. — չինեց, Ե. — 2 = Ե. Ժ.,  
2: Զունին Ա.Գ.

Ժ. 1. — Զաչըն և զուներն թըխ-  
ոցոց, յերեսն . . . Ե. — 2 = Ե, Ժ. 2:  
Զունին Ա.Գ.

Ժ. 1. — և անդ — անդըք, Ե. — 2  
— կընզրել, Ե. Առոտանայ, Գ.

## ԺԷ.

Դընաց մըտաւ պիղծն ի ժողովլս , հոն որ իշխանքըն կուտեցան ,  
Զվիզըն կեռեց բան զբարբի աւծ . զմէջըն ոլորեց բան զաղեղան :

## ԺԹ.

Աչօք և ունօք խնմով նայէր , բազուկ ծրգէր բան զուռ նօնան ,  
Զոտքըն առեալ մանիւ նիմէր , ի լեզեհոն զօրքն ի նըման :

## Ի.

Յիմարեցոյց ըզթազաւորն , շարժեաց ի յախտ պոռնըկութեան ,  
Սաաց երդմամբ . Խնդրէ , աղջիկ , յինէն պարզեւք որ բեզի տամ :

## ԻԱ.

Խնդրեաց ըզզլուխըն զՅովանու , աստուածարեալ եւ սրբազան ,  
Ցոյժ տրտմեցաւ , ոչ կարէր տալ , բայց նայ ետուր վասն երդման :

## ԻԲ.

Առաքեաց արբայն դահիճ , եւ նայ զընաց յոյժ լալական ,  
Գողալով եմուտ ի բանտն , եւ վայ կանչէր հազար բերան :

## ԻԳ.

Ի՞նչ լինիմ ողորմելիս , ես մոլորեալս ընդ որ զընամ .  
Մինչեւ յաւժար սուրբն Յովաննէս իւր սպանելոյն ետուր հրաման :

## ԻԴ.

Գողալով երկիւղալից եհատ ըզզլուխն յոյժ խղճական ,  
Տարաւ ետուր յաղջիկըն պիղծ , եւ նայ ի մայրն ամբարտաւան :

## ԻԵ.

Աշակերտքըն լըսեցին , զմարմինն եղին ի զերեզման ,  
Հողին զընաց առ մարզարէրն , ասաց . Կու զայ անմահ արբայն .

## ԻԶ.

Դայ եւ զամէնքս ազատ առնէշ ի գրժոխոցն անդնդական ,  
Տանի ի գասն ի հրեշտակաց , ուրախութիւն եւ անվախճան :

## ԻԷ.

Վաղվենէն այն պիղծ աղջիկն զիւր գործ յարիքն ի պաղն եհան ,  
Պաղըն երաց ըզիւր բերանն , մէկ շուն մարմին երկու եղան :

ԺԸ-ԺԹ. — Դընաց խազաց աղջիկըն  
պիղծ , հանց որ ժողովքըն հաւեցան ,  
Խընջէր աչաւք առնէր յաւնով ի լեզէռն  
զաւրքն ի նըման (= b , ձլ) :

Ի. — Զարքայն շարժեաց յախտ ցան-  
կութեան , այն մարմնաւոր պիղծ սասաւ-  
նայն , ասաց խընդրեաց յինէն աղջիկ . թէ  
ինչ զարգե քեզ խոստանամ (= b , ձլ) : —  
1 — յախտ , աղաւ ԱԳ . ախտ , Ձ :

ԻԱ.-ԻԲ. — Խընդրեաց ըզզլուխըն Յո-  
վաննու , հասայց նըմա աւը կատարման ,  
եւ առաքեաց արքայն դահիճ . բայց նա-  
զընաց յոյժ լալական (= b , ձլ) :

ԻԳ. 1. — Զունի Ե : — 2 — Զունի Գ : —

Ապա յաւժար սուրբն Յովաննէս իւր սպա-  
նելոյն ետ հըրաման , Ե :

ԻԴ. 1. — Եյսաս վախելով երկիւղալից  
կըտքեաց ըզզլուխըն պատուական , տար-  
եալ երես աղջիկըն պիղծ յանիծեալ մայրն  
ամբարտաւան (= b , ձլ , 2 — ձկ , 1) : —  
2 — յաղջիկըն , Ձ . աղջիկըն , ԱԳ :

ԻԶ. 2. — անվախճան , Ձ . անվաղճան ,  
Գ . անվաղջան , Ա :

ԻԷ. 1. — Վաղիւն այլ զայ այն պիղծ  
ու չարն , իւր գործքըն չար ի յինքն եհան ,  
Ե (ձլ , 1) : — 2 — Պաղն ըզզլուխըն կը-  
տքեաց , մարմինն իչաւ ի կեր ձըկան , Ե

## Ա. Բ.

Լաշըն զընաց ի կեր ծըկանցն, զլուխըն մընաց սառցին բերանն,  
Վասըն պատճառ մաւրըն սման, որ ցաւազնի խիստ զանա(j)զան :

## Ա. Բ.

Բերին դըրին ի սկըտեղին, տարան ի մաւրն աղերս նըման,  
Մայրըն տեսաւ, յոյժ նիշ երարծ, ի վեր հայեաց դէմ ի Աստուած :

## Ա. Բ.

Հսկըսաւ եւ ծուռ խաւսեց, սուրբ Յովաննու շատ հայնոյից,  
Խելքըն զընաց, աչքըն շըլեց, գոյն (j)երեսացն կապուտ դարձոյց :

## Ա. Բ.

Զեռքըն եւ սուրբն կապւեցաւ, ի յառիքէն քար մի անկաւ,  
Ի վերայ զլիս(ւ)ոյն անկ[ն]ալ ջարդաւ, որպէս պիղծ շուն սատակեցաւ :

## Ա. Բ.

Մառայըն առեալ ի սուրբ զլուխըն, տարեալ եղին ի պատուհանն,  
Թէ աշակերտք եկեալ տացն զին եւ կաշառ ի սուրբ զլիսանն :

## Ա. Բ.

Ի պատուհաս եկաւ պղծ(ւ)ոյն, տունն փրլաւ մարմնոյն վերայ,  
Որպէս կորեաւ դեւ լկտին, գերեզմանի չեղ[հւ արժան ?] :

## Ա. Բ.

Շատ ժամանակ եկաց անտի, մինչեւ եկեալ երկու աթեղայն,  
Եկին զըտին ի սուրբ զըլուխն, առեալ շալակ մանպահ ելան :

## Ա. Բ.

Ի բրտին հանդիպեցան, վաճառեցին գուհարըն այն,  
Բըրուտն առեալ տարայւ իւր տունն, նըշան արար խաչանըման :

## Ա. Բ.

Ես Յովանէս Թուրկուրանցի կարճ համառաւտ ասցի զայս բան,  
Տէրըն տայ ծեզ խաղաղութիւն, պահէ անփործ եւ անսասան :

(2)

Ն. ԵՊՈ. ԾՈՎԱԿՈՆ

(ԺԸ, 2): Զգլուխըն կարեց ի վերայ պաղին, ժարմին իջաւ ի կեր ձկան, Ա.:

Ի. Ե.-Լ. Ե. - Այս ուժ տուները կը գտնուին միայն Գ օրինակին մէջ:

Ի. Բ. 1. - սկսեղին, 2. - սկսեղին, Գ.:

Լ. Ա. 1. - ի յառիքէն, 2. - ի յառեգէն, Գ.:

Լ. Բ. 2. - տային, Զ.:

Լ. Գ. 1. - Տէր Յովաննէս Թըլկուրան-

ցին փոքր ի շատէ ասաց զայս բան, Ե (ԺԸ,

1): - 2 - անփործ - ամբողջ, Ե: